ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/59

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր՝ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Նավասարդյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Մ. Եղիազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով գնանշման հարցում, մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 06.08.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

- Դադարեցնել «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով գնման ընթացակարգը:
- Դադարեցնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2019 թվականի որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.08.2019թ.-ին:

06.08.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 14.08.2019թ.-ին, 27.08.2019թ.-ին և 03.09.2019թ-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 03.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.09.2019թ.-ին:

<u>2. «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) իր կարիքների համար «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով կազմակերպել է գնանշման հարցման ընթացակարգով «Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման» մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

ՀՀ գնումների մասին օրենքի 22-րդ հոդվածի համաձայն Պատվիրատուն՝ 22. 07. 2019 թվականին, օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

«Ֆակտորի Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ բողոքաբեր) հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել ու ստորագրել է գնման ընթացակարգի մասնակցության հայտը և ներբեռնել է armeps համակարգ: 29.07.2019 թվականին, գնման ընթացակարգի հայտերի բացումից հետո, gnumner.am կայքում հայտարարել է Մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.07.2019 թվականի բացման նիստի արձանագրությունը: Գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի 26.07.2019 թվականի հայտերի բացման նիստում ներկայացվել է որ, «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտ, սակայն հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա չեն: 26. 07. 2019 թվականին բողոքաբերը գրավոր դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն ստեղծված իրավիճակը պարզելու և տեխնիկական խնդիրը շտկելու նպատակով: 26. 07. 2019 թվականին կազմվել և 31. 07. 2019 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է վերը նշված գրության պատասխանը, որտեղ արձանագրվել է որ, «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը չի ապակոդավորվում: Գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

Սույն գործի փաստական հանգամանքների, բողոքաբերի կողմից ներկայացված փաստաթղթերի, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրության, ինչպես նաև 31. 07. 2019 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված գրության համադրման վերլուծության արդյունքում, գտնում եմ, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարության 31. 07. 2019 թվականի գրությունը չի բխում գործի փաստերից և հակասում է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին հետևյալ պատճառաբանություններով.

1. Բողոքաբերն, ինչպես նշել եմ սույն բողոքի «Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր» բաժնում, ներկայացրել է մասնակցության հայտ՝ Երևանի քաղաքապետարանի կողմից 2019 թվականի հուլիսի 19-ին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին: Մրցույթի մասնակցության համար հայտերի բացման ժամկետ էր սահմանված մինչև 2019 թվականի հուլիսի 26-ը ժամը 12:00-ն: «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի «Հայտն ներկայացնելու կարգ»-ի և «Հայտի գնային առաջարկը» բաժնի հրահանգով նախատեսված

պահանջներին համապատասխան կազմել է հրավերի Հավելված 1-ով սահմանված գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը և Հավելված 2-ով սահմանված գնային առաջարկը: Լրացված հավելվածները Microsoft Word ձևաչափից ձևափոխվել են PDF ձևաչափի և հաստատվել են ընկերության տնօրենի էլեկտրոնային ստորագրությամբ՝ 2019 թվականի հուլիսի 26-ն ժամը՝ 11:36-ին /տես կից փաստաթղթերը PDF ձևաչափով, որտեղ հստակ երևում է ընկերության տնօրենի էլեկտրոնային ստորագրությունը, ստորագրման ամսաթիվն ու ժամը/: Այնուհետև ստորագրված PDF փաստաթղթերը ամփոփվել են zip ձևաչափով՝ համակարգում ներբեռնելու նպատակով /տես կից screenshot-ը, որտեղ հստակ երևում է, որ zip փաստաթուղթը դատարկ չէ և պարունակում է անհրաժեշտ տեղեկատվությունը/: Փաթեթը ներկայացնելու ժամանակ Հավելված 1-ը ներբեռնվել է փաթեթի կառուցվածքի «Պիտանելիության չափորոշիչ» բաժնում, իսկ Հավելված 2-ը՝ «Ֆինանսական ծրար» բաժնում, որտեղ նաև առանձին աղյուսակում նշվել է առաջարկվող գինը՝ առանց ԱԱՀ: Մրցույթի կառուցվածքը պահպանվել և փաթեթավորվել է, որից հետո zip ձևաչափով փաստաթուղթը ներբեռնվել է Մրցույթի հայտեր դաշտում: Ընկերության հայտերը ուղարկելուց հետո Ընկերության armeps համակարգում առկա էջում երևում են բոլոր անհրաժեշտ հաստատումները /հաստատված կանաչ տարբերանշանով/ առ այն, որ փաստաթղթերի փաթեթը բեռնվել ու ներկայացվել է սահմանված կարգով /տես կից screenshot-երը/:

2. Պատվիրատուի կողմից մրցույթի հայտերը բացվելուց հետո պարզվել է, որ բողոքաբերի կողմից ներկայացված մրցութային փաթեթը բացակայում է գնումների էլեկտրոնային armeps համակարգում: Այսինքն Պատվիրատուի մոտ ընդհանրապես բացակայել է սահմանված կարգով ներկայացված փաթեթը, որի արդյունքում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26. 07. 2019 թվականի հայտերի բացման նիստում արձանագրվել է որ, «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտ, սակայն հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա չեն, ուստի վերջինս որպես մասնակից չի դիտարկվել: Ավելին, նույնիսկ առկա չի եղել «Ֆինանսական ծրար»-ի գնային առաջարկի «Արժեք» բաժնում նշված գումարը: Արդյուքում թե Պատվիրատուն, թե մրցույթի մնացած մասնակիցները չեն կարողացել տեսնել կամ ներբեռնել բողոքաբերի մրցութային փաթեթը: Ընդ որում նշենք, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն ի սկզբանե ներկայացրել է ծառայությունների մատուցման նվազագույն գնային առաջարկը:

3. Առաջացած տեխնիկական ու էլեկտրոնային համակարգի ծրագրային խնդրի վերաբերյալ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն 26. 07. 2019 թվականին գրավոր, secretariat@minfin.am էլ. փոստի միջոցով, դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ներկայացնելով համապատասխան գրությունը բնօրինակից արտատպված և Ընկերության տնօրենի կողմից ստորագրված տարբերակով և լրացված ու ներբեռնված մրցութային փաթեթը՝ խնդրելով պարզաբանել նշված իրավիճակը: Գրությանը հաջորդիվ, բազմաթիվ հեռախոսազանգերից հետո տեղեկացվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումը ուսումնասիրում է ստեղծված իրավիճակը և մեկ օր հետո բողոքաբերի մրցութային փաթեթը հայտնվում է armeps էլեկտրոնային համակարգում, սակայն տեխնիկական խոտանով, որի արդյունքում հնարավոր չէ zip ձևաչափից արտահանել PDF ձևաչափերով կազմված փաստաթղթերը: Գրությանն ի պատասխան 2019 թվականի հուլիսի 31-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է պարզաբանում, ըստ որի բողոքաբերի կողմից գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

Սակայն դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն առաջին անգամը չէ որ մասնակցության հայտ է ներկայացնում համանման գնման ընթացակարգի, իսկ ներկայացված փաթեթը կազմվել է սահմանված պահանջներին համապատասխան, քանի որ.

Փաթեթը գնումների էլեկտրոնային armeps համակարգ ներբեռնելու արդյունքում համակարգը ցույց է տվել, որ այն համապատասխանում է սահմանված չափանիշներին /կանաչ տարբերանշանների առկայությամբ/

Zip փաթեթը դատարկ չէ, ինչի մասին է վկայում վերջինիս պարունակության ծավալը՝ 548 KB /տես կից screenshot-ը/

Եթե փաթեթի ներբեռնման արդյունքում առկա են էլեկտրոնային գնումների armeps համակարգում բողոքաբերի էջում բոլոր անհրաժեշտ հաստատումները, ապա տվյալ դեպքում առաջացած տեխնիկական խոտանը «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի իրավասության ու պատասխանատվության շրջանակներից դուրս է:

Նշված փաստական հանգամանքների և իրավական նորմերի համադրման վերլուծությունը ցույց է տալիս որ, «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից կազմվել է ՀՀ գնումների օրենսդրությանը և Հրավերի հրահանգին համապատասխան մասնակցության հայտ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատճառաբանումը հմինավորված չէ, «հեռահաղորդակցման անհայտ սխալ» մեկնաբանությունը «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի սխալ փաթեթի ներբեռնման արդյունք չի կարող հանդիսանալ:»:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են՝

- Դադարեցնել «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով գնման ընթացակարգը:
- Դադարեցնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2019 թվականի որոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.08.2019թ. գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հնարավորություն տալով «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայանալով նշանակված նիստերին բանավոր կերպով միջնորդել են բողոքի քննությանը ներգրավվել էլեկտրոնային գնումների համակարգի՝ armeps.am կայքի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության ներկայացուցչին, քանի որ բարձրացված խնդիրը տեխնիկական բնույթի է:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման» նպատակով հայտարարավել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 26.07.2019թ. կայացած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ Armeps համակարգի (այսուհետ' Համակարգ) միջոցով հայտ է ներկայացրել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն, սակայն բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա չեն եղել:

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն 26.07.2019թ.-ին գրավոր դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրելով պարզաբանել և շտկել առաջացած տեխնիկական խնդիրը:

Ի պատասխան վերոնշյալ գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Ինչպես նաև նույն գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի փաթեթը չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ն 03.09.2019թ.-ին «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցչին հայտնել է հետևյալը. *«Armeps համակարգում հայտերի վերբեռնել/բեռնելու(upload/download) գործառույթն աշխատում է հետևյալ կերպ.*

Մասնակիցը կազմում է իր հայտը, փաթեթավորում հայտերի փաթեթավորման գործիքով, օգտվելով Armeps համակարգից բեռնված գործիքից, այնուհետ վերբեռնում համակարգ: Հայտերը համակարգի տվյալների բազայում պահվում են կոդավորված վիճակում՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Հետագայում հայտերը բեռնելիս ապակոդավորվում են ապակոդավորման բանալու միջոցով:

Մենք չենք կարող հաստատել արդյոք խնդիրն առաջացել է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու համար իրականացված քայլերի սխալ հաջորդականության, թե ապակոդավորման գործիքի մշակման փուլում առաջացած ալգորիթմի հնարավոր սխալի,

թե մասնկացի համակարգչում իրականացված գործողություններից հետո հայտի և կից փաստաթղթերի պահպանման և փոխանցման ընթացքում առաջացած սխալի պատճառով:

ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150 ծածկագրով ընթացակարգին «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի փաթեթը չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվում է սխալ բանալի:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն

հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման» նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2019թ. կայացած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ Armeps համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով հայտ է ներկայացրել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն, սակայն բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերն առկա չեն եղել:

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի 26.07.2019թ.-ին գրավոր դիմումին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ բարձրացրած խնդրի կապակցությամբ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, տեղեկացնելով, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի փաթեթը չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ն 03.09.2019թ.-ին «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցչին հայտնել է, որ չեն կարող հաստատել արդյոք խնդիրն առաջացել է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու համար իրականացված քայլերի սխալ հաջորդականության, թե ապակոդավորման գործիքի մշակման փուլում առաջացած ալգորիթմի հնարավոր սխալի, թե մասնկացի համակարգչում իրականացված գործողություններից հետո հայտի և կից փաստաթղթերի պահպանման և փոխանցման ընթացքում առաջացած սխալի պատճառով: ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150 ծածկագրով ընթացակարգին «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի փաթեթը չի ապակոդավորվում, քանի որ գեներացվում է սխալ բանալի:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի 03.09.2019թ.-ին «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցչին տրված գրությունը գործով ձեռքբերված որպես էական նշանակություն ունեցող ապացույց գնահատելով, անորոշ է և հնարավորություն չի տալիս հաստատելու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

Ավելին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, պատասխանելով Ընկերության գրությանը, հայտնել է, որ հայտի փաթեթը չի ապակոդավորվում, քանի որ գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն գեներացրել է սխալ բանալի, որի արդյունքում հայտի փաթեթը չի ապակոդավորվել, որպես հետևանք բացակայել են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում և գնային առաջարկը: Նման պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ 20.08.2019թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/13828-2019 գրությամբ, դիմելով «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին, խնդրել է ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի (անձանց) մասնակցությունը (ներկայությունը) 27.08.2019թ.-ին ժամը 15:10-ին կայանալիք

նիստին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված բողոքով բողոք բերողի իրավունքի խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգին, և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանի 15-րդ կետի դրույթները:

Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն չի ապահովել իր կամ իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/59 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**